ՆԱԽԱԳԻԾ 45

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
------- 2010 թվականի N - Ն
ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1522-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 262-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը որոշում է.

1. <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին>> N 1522-Ն որոշման N 5 հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի մարտի 18-ի <<Գրականության հրատարակում>>, <<Ոչ պետական մամուլի հրատարակում>>, <<Աջակցություն գրականության հրատարակմանը>> և <<Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակում և հրատարակում>> ծրագրերով 2010 թվականին նախատեսված հատկացումների բաշխման մասին>> N 262-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածի՝

ա. աղյուսակի 7-րդ սյունակի <<5150.0>> թիվը փոխարինել <<3550.0>> թվով, իսկ <<92392.4>> թիվը փոխարինել <<90792.4>> թվով,

բ. աղյուսակի <<13. Պետական խորհրդանիշների և քաղաքացիական դաստիարակության ազգային ծրագրին վերաբերող գրականություն>> բաժնի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել,

2) որոշման N 2 հավելվածի՝

ա. աղյուսակի 4-րդ սյունակի <<47777.1>> թիվը փոխարինել <<47277.1>> թվով, իսկ <<12468.0>> թիվը փոխարինել <<11968.0>> թվով,

բ. աղյուսակի 10-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

3) որոշման N 3 հավելվածի՝

ա. աղյուսակի 5-րդ սյունակի <<16770.0>> թիվը փոխարինել <<15770.0>> թվով, իսկ <<40000.0>> թիվը փոխարինել <<39000.0>> թվով,

բ. աղյուսակի <<Գիտահանրամատչելի գրականություն>> բաժնի 8-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
---------ի N - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1522-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

Բաժինը	Խումբը	Դասը	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)
				տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ	0
			այդ թվում՝	
08			ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	0
			այդ թվում՝	
	02		Մշակութային ծառայություններ	3100.0
			այդ թվում՝	
		05	Արվեստ	3100.0
			04.Մշակութային միջոցառումների իրականացում	
			ՀՀ մշակույթի նախարարություն	3100.0
			այդ թվում՝	
			Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին	3100.0
	03		Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ	(3100.0)
			այդ թվում՝	
		02	Հրատարակչություններ, խմբագրություններ	(3100.0)
			02.Գրականության հրատարակում	(1600.0)
			ՀՀ մշակույթի նախարարություն	(1600.0)
			այդ թվում՝	
			Տեղեկատվական ծառայություններ	(1600.0)
			05. Ոչ պետական մամուլի հրատարկում	(500.0)
			ՀՀ մշակույթի նախարարություն	(500.0)
			այդ թվում՝	
			Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին	(500.0)
			11.Աջակցություն գրականության հրատարակմանը	(1000.0)
			ՀՀ մշակույթի նախարարություն	(1000.0)
			այդ թվում՝	
			Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին	(1000.0)